ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 3-ը մարտի 2017թ.
ժամը 12^{00}

Մասնակցում էին՝ **գնահատողներ՝**
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ, գնդապետ Վ. Գասպարյանը (**ԳԱԿ**),
անդամներ՝
ՀՀ ՊՆ Կ և ՌԿ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ն. Սմբատյանը (**ԳԱ**),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Ի, ԿՔՆ, ԿԿՍՄԱ բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը (**ԳԱ**),
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության ավագ Ա. Հակոբյանը (**ԳԱ**),
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը (**ԳԱ**),
Գնումները համակարգող՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԳՓՁ վարչության ԱԾԳՓՁ բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Գ. Թովմասյան:

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/1» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

---

1. Տեղեկություններ **www.armeps.am** կայքում էլեկտրոնային հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.
5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ /գնային առաջարկ/ ներկայացրած մասնակիցների մասին.

ՀՀ ՊՆ կարիքների համար **«Վերապատրաստման ծառայության»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ են ներկայացրել՝

Հ/հ	Մասնակիցների անվանում
1	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
2	«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ
3	«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ
4	Ա/Ձ Հունան Մանթաշյան Սևանի

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության, բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության, յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին.

2.1 Մասնակիցներից 3-ի էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

2.2 Հանձնաժողովը ուսումնասիրել է մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայությունը և **ներկայացրած փաստաթղթերի՝** սահմանված պայմաններին (պահանջներին) համապատասխանումությունը:

2.3 Ա/Ձ Հունան Մանթաշյան Սևանի էլեկտրոնային հայտը կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի, քանի որ ներկայացված էլեկտրոնային հայտում որևէ փաստաթուղթ ներբեռնված չէ, և հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

Հանձնաժողովը մինչև 13/03/2017թ. ուսումնասիրել է մասնակիցների գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը /հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները, և **1 մասնակցի հայտ** գնահատել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող /ճիշտ է/, իսկ **2 մասնակցի** հայտ գնահատել է անհամապատասխան /սխալ/ և մերժել է հետևյալ հիմքերով՝

- «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ-ի էլ. հայտում առկա գնային առաջարկը էլեկտրոնային ստորագրությամբ չեն հաստատվել՝ հրավերի 7.9 կետ,

- «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամ-ի էլ. գնային առաջարկում նշված չէ ոչ կոնկրետ գնման առարկան, ոչ էլ հերթական համարը (չափաբաժինը), ուստի հանձնաժողովը դրանք գնահատելու հնարավորություն չի ունեցել՝ հրավերի 7.1.1 կետ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ընթացակարգի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշելու մասին.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչվեց ամենաէժան գնային առաջարկ ներկայացրած մասնակիցը՝

Չ/բաժնի համար	ը/կ	Չափաբաժնի անվանումը	Նախահաշ. գինը /ՀՀ դրամ/	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ		«ՀՀ պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ	
				Առանց ԱԱՀ	գին	Առանց ԱԱՀ	գին
1		***Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն (Քաղաքացիական ծառայողների վերապատրաստում)***					
	1.1	Գործավարություն		330,000	396,000		
	1.2	Իրավագիտություն				480,000	576,000
	1.3	Տնտեսագիտություն և հաշվապահություն				240,000	288,000
	1.4	Շինարարություն և կոմունալ ապասարկում					
	1.5	ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները		330,000	396,000		
2		***Աշխատակիցների վերապատրաստման ծառայություն (Շինծառայողների վերապատրաստում)***					
	2.1	Հոգեբանություն		660,000	792,000		

4.2 **Հանձնաժողովը որոշեց՝**

Ա) հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակցին առաջարկել ներկայացնելու ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Բ) ՀՀ ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և հաջորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

«ԳԱԿ-ՇՀԾՁԲ-15/7-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԾՁԲ-6/1» ծածկագրով ընթացակարգի նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի համապատասխանությունը գնահատելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 11[00]-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) Վ. Գասպարյան

Գնահատող Ն. Սմբատյան

Գնահատող Գ. Ուստյան

Գնահատող Ա. Հակոբյան

Գնահատող Կ. Բրուտյան

Գնումները համակարգող՝ Գ. Թովմասյան